XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

XVIII դարի հայ մշակութային շարժման կարևոր օղակներից մեկը բանաստեղծությունն է։ Նորոգվող, ծավալվող ժողովրդական երգը, կատարելության հասած աշուղական բանաստեղծությունը և գրավոր — անհատական բնարերգությունը։

Այս երեք ճյուղերը հին ու նոր գրական այլ տեսակների հետ միասին՝ արձակ և չափածո առակ, հանելուկ, երկտող և քառստող բանաստեղծություններ, պատմվածք, կրույց, վիպերգություն (պոեմ), ճանապարհորդական հուշագրություններ, թատերատիպ երկեր, տեսական, գրականագիտական աշխատություններ և այլն, կազմում են XIX դարի հայ նոր, դասական գրականության նախապատմությունը։

XVIII դարի գրավոր բանաստեղծությունը միատարր չէ։ Դարասկզբից մինչև վերջը, մինչև XIX դարի առաջին տասնամյակները, սկսած Պաղտասար Դպիրից, Պետրոս Ղափանցուց մինչև Հովհան Վանանդեցին, Արսեն Բագրատունին և Հարություն Ալամդարյանը, առաջ է գալիս բանաստեղծների մի սերունդ, որի ինքնատիպ ժառանգությունը հայ բանաստեղծության դարավոր շղթայի մի նոր օղակը, հայության ժամանակի համընդհանուր իրավիճակի գրական արձագանքն է։

Նույն այդ ժամանակամիջոցում հանդես է գալիս բանաստեղծների մի այլ սերունդ, սկսած Տեր Կոմիտաս Քահանայից մինչև Կարապետ Էրզրումեցին, մինչև XIX դարի առաջին տասնամյակների բանաստեղծներ Եղիա Թումանյանը, Գաբրիել Ավետիքյանը, Մանուել Ջախջախյանը, Աբրահամ Աստուրատցին և ուրիշները, որոնց բանաստեղծության նյութն ու արվեստը մնում են միջնադարյան կրոնական բարոյագիտության նեղ ոլորտում, և որոնց մոտ բանաստեղծությունն իսկական առումով չի կարելի որոնել[1]*։*

XVIII դարի գրավոր բանաստեղծությունը ուշագրավ է առաջին խմբի բանաստեղծների լավագույն երգերով, ուստի մեր խոսքը վերաբերում է առաջին սերնդի քնարական ստեղծագործության հիմնական առանձնահատկություններին։

* * *

XVIII դարի հայ գրավոր բանաստեղծությունը, հակառակ ժողովրդական և աշուղական բանաստեղծության, հորինվում էր զարար լեզվով։ Սա այն մայր ուղին էր, որ սկիզբ էր առել V դարից և հայ բանաստեղծության աշխարհականացման բուռն էտապում՝ XIII—XVII դդ., նվազել, սեղմվել էր, և ահա, XVIII դարում վերստին աշխուժանում է, վերաշինվում։ Ի՞նչ նշանակություն է այս։ Ինչո՞վ է պատճառաբանվում այս երևույթը։

Հայտնի է, որ Հայաստանի պարսիկ և թուրք տիրողները XVIII դարում ևս շարունակում էին գործադրել ամեն ջանք՝ մեռցնելու հայության հավատն ու լեզուն։ Դժբախտաբար այդ նրանց քայլ առ քայլ հաջողվում էր՝ բռնի թե խաղաղ միջոցներով։ Որպես այդ դառն իրողության բազմաթիվ արտահայտություններից մեկը դոյանում էին թրքախոս և պարսկախոս հայության լեզվերվածներ, հանդես էին գալիս թրքախոս հայ աշուղներ, բանաստեղծներ, որպես շարյաք փոքրագույնը ստեղծվում էր հայատառ թուրքերեն վիթխարի գրականություն։ Հայ կյանքը լճացում էր ապրում։ «Պետք էր հայությանը փրկել վերջնական անկումից և վայրենացումից։ Եվ ահա XVII դ. առաջավոր մարդկանց բոլոր ձգտումները կենտրոնանում էին այն բանի մեջ, որ կենդանացնեն մեռնող հայ կյանքը։ Դրա համար երկու նանապարհ է ներկայանում նրանց—վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել Եվրոպական լուսավորությունից»[2] *(ընդգծ. մերն է—Շ. Ն.)։*

---

[1] Ս. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 1946, 2-րդ մաս, էջ 478։

[2] Նույն տեղում, էջ 438։

Ո՛չ հայատառ թուրքերեն գրականությունը, ո՛չ արաբական, պարսկական, թուրքական բառերով ողողված տեղական բարբառները, որոնք, թեև օտարացած հայության շրջաններում, հայ ժողովրդական մշակույթի, հայության ողու պահպանման հարցում զգալի դեր էին կատարում, չէին կարող առաջ մղել հայ մշակույթի զարդացումը. կանխել նրան սպառնացող վտանգը։ Ուստի XVIII դարի գրչի և թրի շարժմանց գործիչները, ժամանակի հայ հոգևոր և աշխարհիկ բանաստեղծները, վերևում հիշված շարյաց փոքրագույնը համարվող միջոցների հետ մեկտեղ (նաև նրանց անհեռանկարային առաջընթացը չափավորելու նպատակով), կյանքի էին կոչում հին, դասական լեզուն՝ գրաբարը։ Դա միակ միջոցն էր այն ժամանակաշրջանի համար։ Այլապես, ո՞ր բարբառը կարող էր Իսրայել Օրիի և Շահամիրյանների ծրագրային, առաջադեմ գաղափարախոսության սերմերը տարածել անհայրենիք հայության մեջ։ Հարկավ, ո՛չ պոլսահայ, ո՛չ ջուղայահայ, ո՛չ Արարատյան գավառի, ո՛չ էլ Թիֆլիսի բարբառը։ Տվյալ շրջանում, կիլիկյան միջին հայերենի՝ համաժողովրդական գրական լեզվի անհետացման այս էտապում, մեռնող հայ կյանքը վերածնելու, գրչի նոր շարժման միջոցներից մեկն էր գրաբարը։ Այդ բանը քաջ գիտակցելով է, որ հայ ժողովրդի քաղաքական բախտով մտահոգված գործիչներն իրենց գեղարվեստական, հրապարակախոսական, պատմական կամ գիտական աշխատությունները շարունակում էին գրել գրաբարով։ Պատմական այս նույն պատճառով է, ահա, XVIII դարի գրավոր բանաստեղծության մեջ վերակենդանանում, աշխուժանում գրաբարը։

Սակայն ո՛չ մթին գրաբարը, այլ դժվարամարս ձևերից աղատված, երբեմն նաև հայ ժողովրդական բարբառների հղկված ու կոկված տարրերն իր սեջ ընդունող պարզ գրաբարն է դառնում գրավոր, ընտիր ինաբերգության լեզուն։ Պարզ գրաբարով են գրում իրենց լավագույն երգերը (հարկավ ո՛չ միօրինակ պարզությամբ) բանաստեղծներ Պաղտասար Դպիրը, Հակոբ Նալյանը, Ղազար Ճահկեցին, Պետրոս Ղափանցին, Հակոբ Շահամիրյանը, Սիմեոն Երևանցին, Գրիգոր Օշականցին, Հովհաննես Կարնեցին, Թադեոս Ջուղայեցին, Հովհաննես Բերիացին, Հակոբ Վարդապետը, Գևորգ Խուրովը, Սահակ Կարնեցին և սրանից հետո XIX դարի առաջին տասնամյակների նշանավոր բանաստեղծներ Հովհ. Վանանդեցին, Հ. Ալամդարյանը, Մ. Թաղիադյանը և նույնիսկ Խ. Աբովյանը։ Պարզ գրաբար լեզուն XVIII դարի գրավոր բանաստեղծության առաջին առանձնահատկությունն է։

XVIII դարի գրչի պայքարի մարդիկ չէին սահմանափակվում միայն գրաբարով։ Դատելով այդ դարի մտավոր գործիչների բազմաբնույթ տպագիր և ձեռագիր գրաբար և աշխարհաբար լեզվով շարադրված գործերից և լեզվի մասին նրանց տեսական ակնարկներից, կարելի է ասել, որ նրանք փնտրում էին գրավոր լեզուն ժողովրդին մատչելի դարձնելու հնարավոր միջոցներ, որ նրանց խորապես մտահոգում էր նաև լեզվի հարցը, հարց, որ այն ժամանակ, բնականաբար, հասունացած չէր։ Այդ պատճառով, ահա, այդ գործիչները գրում էին և՛ գրաբար, և՛ աշխարհաբար, այսինքն՝ գրում էին «պարզ բանիւ», «դիւրալուր ոճիւ», ինչպես ասում էն Պ. Դպիրը և Պ. Ղափանցին, գրում էին նաև «աշխարհի բառով»՝ տեղական բարբառներով, ամենորեն՝ ինչպես գրում են Հ. Նալյանը, Պ. Դպիրը և ուրիշները իրենց բարոյագիտական, պատմական-կրոնական մի շարք աշխատությունները, ինչպես հորինում է իր երգերը հանճարեղ Սայաթ-Նովան։

Հայ գրավոր քնարական բանաստեղծության մեջ, XVIII դարում, գրաբարի հետ միասին, վերստին կենսունակություն են ստանում կրոնա-եկեղեցական նյութը, հավատքի ոգին։ Ինչո՞վ բացատրել այս երևույթը։ Հայ մշակութային կյանքում երկար ճանապարհ անցած կրոնական երգը թվում է թե XVIII դարում արդեն շեղում է XIII—XVII դարերի աշխարհիկ բանաստեղծության վերապրաց գիծը, կոտրում է Կ. Երզնկացուց Ն. Հովնաթանը ներառյալ ստեղծված ժողովրդաշունչ բանաստեղծության թափը։ Սակայն այդպես թվում է, երբ այդ հարցը քննում ենք ժամանակի պատմական իրականությունից կտրված, երբ գրավոր գրաբար բանաստեղծությունը հակադրում ենք նույն ժամանակի ժողովրդական-աշուղական բանաստեղծությանը, երբ միևնույն չափանիշով ենք մոտենում գրաբար-կրոնական երգերին առնասարակ և, վերջապես, երբ անտեսում ենք գրաբարագիր վերոհիշյալ բանաստեղծների ստեղծագործության զարդացման վերընթաց գիծը։

XVIII դարի գրաբար բանաստեղծության մեջ կրոնական ոգու աշխուժացումը ունի պատմա-քաղաքական շատ պատճառներ։

Հայտնի է, որ պարսկա-թուրքական բռնակալները XVIII դարում դեռ շարունակում էին հայության նկատմամբ կիրառել հավատափոխության ծանրագույն միջոցներ։ Պատմությանը հայտնի են ազգաձուլման դեմ ծառացած հայերի բազմաթիվ անուններ նաև XVIII դարից։ Քիչ չէ նման դեպքերի շուրջ հյուսված վկայաբանական ստեղծագործությունների թիվը։ Ժամանակը չէր մեղ-

մացրել հպատակ քրիստոնյա հայության նկատմամբ մահմեդական մոլեռանդությունը, նետնաբար հպատակների և նվաճողների միջև եղած պայքարը XVIII դարում դեռևս ուներ նաև կրոնական ուժեղ շեշտ: Բացի այդ, հատկապես արևմտահայության համար շարունակվող այս ծանր դրությանը զուգակցվում էր նաև կրոնա-դավանական ներքին պայքարը, որ XVIII դարի սկզբներից սուր բնույթ էր ստանում՝ կենտրոն ունենալով Պոլիսը։ Այս վիճակից օգտվում էին հայության այլակրոն տերերը՝ սուլթանական Թուրքիան և շահական Պարսկաստանը։ Կրոնա-դավանական պայքարը ջլատում էր հայությանն ներքին միասնությունը, շեղում նրա գործիչների ուշադրությունը հիմնական խնդիրներից։ Մի կողմից մահմեդականների հայահալած, քրիստոնեահալած քաղաքականությունը, մյուս կողմից Հռոմից ներթափանցող լատինադավանության վտանգը հայ գործիչներին հրամայաբար թելադրում էին զորացնել լուսավորչական հավատը հայ ժողովրդի մեջ, ուժեղացնել պայքարը երկու ուղղությամբ։ Սա էր ժամանակի կրոնա-քաղաքական պայքարի ուղին, և այդ ուղու վրա էին կանգնած XVIII դարի գրական, քաղաքական ու մշակութային կյանքի նշանավոր հայ գործիչները։ Նրանց գործունեության հիմքում ընկած էր ժողովրդի և եկեղեցու գոյապայքարի միևնույն հարցը։ Հարկավ, նրանցից ամեն մեկն այդ հարցի նկատմամբ ուներ դաղափարական ուրույն դիրքորոշում, ուրույն պահանջ։

Հայաստանում ապագա բուրժուական հանրապետություն ստեղծելու երազանքով խանգավառված Շահամիրյանները երբեք չեն նվազեցնում հավատքի, եկեղեցու դերը՝ հայ երիտասարդության ազատասիրական, հայրենասիրական դաստիարակության գործում։ Արմատական ազատասիրական գաղափարախոսության հետ ջերմ հավատասիրությունն ու աստվածասիրությունը Շահամիրյանների քաղաքական ծրագրի գործոն հատկանիշներից մեկն է. դա մի պահանջ էր, որից չէր կարող խուսափել ժամանակի գործիչը։ Այսպես է վիճակը նաև XVIII դարի հայ դրավոր, գրաբարալեզու բանաստեղծության առաջավոր սերնդի բոլոր ներկայացուցիչների մոտ։ Այս պատճառով ահա Պ. Դպիրից, Պ. Ղափանցուց մինչև Հովհաննես Կարնեցին, մինչև XIX դարի առաջին քառորդի բանաստեղծներ Հովհ. Վանանդեցին, Արսեն Բագրատունին, Հարություն Ալամգարյանը, նույնիսկ Խաչատուր Աբովյանը, գրում էին նաև կրոնական երգեր։ Սա XVIII դարի գրավոր բանաստեղծության երկրորդ առանձնահատկությունն է։

Սակայն հայ ժողովրդի ճակատագրով մտահոգված մարդիկ չէին կարող բավարարվել կրոնական նյութով, ինչպես չէին բավարարվում ոսկեդարյան գրաբարով, ուստի, XVIII դարի դրավոր բանաստեղծության նշանավոր դեմքեր Պ. Դպիրի, Պ. Ղափանցու և այլոց ստեղծագործության մեջ (ամեն մեկի մոտ յուրովի, ամեն մեկի մոտ գրական ինչ-ինչ եղանակներով) տեղի է ունենում մի նուրբ ու իմաստալից շրջադարձ, ստեղծագործական անցում մի կողմից՝ կրոնա-եկեղեցական վերացական բանաստեղծությունից դեպի՝ ժամանակի գործնական պահանջներից բխող կրոնական բանաստեղծությունը, մյուս կողմից՝ անցում բնդհանրապես կրոնական բանաստեղծությունից դեպի աշխարհիկ երգը՝ հասարակական, քաղաքական, ազատասիրական սիրային, բարոյակրթական բովանդակությամբ գրավոր գրաբար բանաստեղծությունը։ Բանաստեղծության հիմնական հերոսի՝ մոլեռանդ հավատացյալ մարդու և հասարակության միջև գոյություն ունեցող հակասությունները (մեծ մասամբ հոգու և մարմնի ընդդիմադիր հարաբերությունների տեսքով) աստիճանաբար վերաճում, վերակերպարանավորվում են մտածող, բանական խոհական անհատի և հասարակության միջև գոյություն ունեցող հակասությունների։ Ստեղծվում է մի վիճակ, երբ բանաստեղծը բանական-աստված հասկացողությունից թեքվում է դեպի բանական-մարդ հասկացողությունը։

Հարկավ, պատմա-հասարակական, տնտեսական ընդդիմադիր պայմանները՝ ֆեոդալական հետամնացությունը, ինքնուրույն պետականության բացակայությունը, պարսկա-Թուրքական բռնակալների դաժան կամայականությունները, կրոնա-աստվածաբանական կրթությունն ու դաստիարակությունը կաշկանդում էին իրական-բանական մտածողության ու հումանիզմի մուտքը հայ իրականության մեջ։ Ուստի արևմտաեվրոպական և ռուս ժողովուրդների համեմատությամբ հայ ժողովրդի մեջ ավելի ուշ և ավելի նվազ արտահայտություն են ստանում դրանք։

Սակայն ժամանակի հասարակական-քաղաքական մտածողության սեպը ճեղքում է նաև XVIII դարի հայ գրավոր գրաբար բանաստեղծության դիրքերը։ Այդ կատարվում է, բնականաբար, ոչ մեկ անգամից, այլ դանդաղ, և բանաստեղծական ոչ շատ ցայտուն ու հստակ, ազգային ձևերի ու պատկերների մեջ։ Բայց կատարվում է։ Ստեղծվում են անհամար կրոնական երգեր, որոնցում հավատացյալի անձնատանջ հեծեծանքների, մեղքի և զղջման մրմունջների մեջ իսկ, ինչպես միշտ, ցոլանում է իրական կյանքի այս կամ այն կողմը.

Լինիմ, զոր ինչ ոչն կամիմ,
Թէպէտ կամիմ, զոր ոչ լինիմ, ամա՜ն.
Ահա այս է, որ կողկողիմ.
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի։

Բանականն ընտրել ո՛չ ունի,
Միջինն ի վեր նայիլ չունի. աւա՜ղ,
Ստինն՝ ըզնիրհակն ընդունի
Այո՛, այո՛, այո՛. եղէ եղկելի, եղկելի[3]։

Մարդը այն չէ, ինչ ուզում է լինել, մարդը այն է, ինչ չի ուզում լինել։ Կրոնական-հասարակական հարաբերությունների մեջ չկա միաբանություն։

Դարձյալ հավատքի նեղ դիրքերից, բայց հաճախ առանց հավատացյալների երկյուղածության, կրոնական բանաստեղծության մեջ (երբեմն հոգու և մարմնի ընդդիմադիր պայքարի տեսքով, երբեմն առանց այդ պաճուճանքի) բնութագրվում է ժամանակի «յոյժ ստահաց մեծատունների», «աստուածարեալք հռչակված զորագլուխների» հասարակականորեն վնասակար դերը.

Զօրագլխաց սոցունց հանախ աստուածարարեալքն հռչակեցին.
Սովու, բանտի և վիշապի. յառաջ արկեալ նմանեցուցին,
Որք ի կորեանց միշտ երկնչիմք, զիա՞րդ կարեմք դէմ կալ սոցին.
Եթէ ոչ իսկ ի յաստուծոյ ձեզ օգնութիւնք յարաքիրին։

Որպէս զրուեալ հաւ մի բրտեալ ունի ըզմեզ ի բրոիս իւր.
Փարի ըզմեօք, ո՛չ յօգուտ մեր, այլ առ ի քէն, և ի կեր իւր.
Խուխուսանօք զայն որ տօնէ, յորժամ արկցէ զոք ի սոր իւր,
Զօրս որսացեալ չեղչակուտէ. որք փափաղին քաղցր եղջերին[4]։

Մենք, որ այդպես վախենում ենք զորեղների «կորյուններից», որոնք իրենց բռում սեղմած ունեն մեր նման թույլերին, տկարներին,— դժգոհում է բանաստեղծը,— ապա ինչպե՞ս պիտի ընդդեմ գնանք նրանց մեծամեծներին։

«Փարթամութիւնը բիւր որոգայթ է մեծաչարիք» «նախնեաց ճշմարիտ» խոսքը կրկնելով, բանաստեղծը, սակայն, իր «յայսմիկ ամբարիշտ մեծի դարի» անարդարությունները վերացնելու համար սկզբում մի ելք, մի ճանապարհ է տեսնում։ Նա դիմում է երկնային թագավորին, «վարդ» աստծուն, բացում նրա առջև իր խոցված սիրտը, մեկիկ-մեկիկ պատմում իր ցավերը և մերթ հուսախաբ, մերթ հույսերով լեցուն՝ սպասում պատասխանի.

Ահա, դալով եկեալ եռաս. վա՜րդ, վա՜րդ.
Ցաւքն յամենուստ հոսեալ դաս-դաս, վա՜րդ-վա՜րդ.
Աղաղակաւ, արդ, ողաղատիմ, վա՜րդ, վա՜րդ,
Ողորմելով յօգնութիւն հաս. վա՜րդ, վա՜րդ[5]։

Սակայն այս այն սահմանը չէ, որի վրա կանգնում են XVIII դարի վերոհիշյալ բանաստեղծները, այն չէ, ինչ կարող էր բավարարել ժողովրդի ճակատագրով մտահոգված հավատացյալ բանաստեղծին։ Մարդու գործած անարդարությունների, մեղքերի համար միայն աստծուն չպետք է դիմել, այլ նաև իրեն՝ մարդուն, և միայն աստծուց չէ, որ պետք է օգնություն, ազատություն սպասել, այլև՝ նաև մարդուց։ Ահա ներքին այն նոր ձայնը, որ լսվում է XVIII դ. վերոհիշյալ բանաստեղծների լավագույն երգերից։ Հասարակական անարդարություններ տեսնող, սակայն հավատամոլ, աշխարհամերժ անհատի կողքին բանաստեղծության մեջ հանդես է գալիս ազատամիտ, ընդվզող անհատը, բանական, խոհական մարդը.

Որքան եմ կացեալ ի կենցաղս.
Հողք զիս երբէք ո՛չ բողին.
Ո՛չ գիտեմ իւրեանց ախորժակ,
Եւ իս երբէք զի՞նչ դրտին։

Չի հանապազ տրտմութեան վիշտ,
Յորդորելով զմիմեանս.
Գան, հասանեն առ տառապեալս.
Եւ զինեն շուրջ բոլորինս։

3 *Պ ա ղ տ ա ս ա ր Դ պ ի ր, Տաղիկներ սիրո և կարոտանաց. Երևան, 1959, էջ 144։*
4 *Պ. Ղ ա փ ա ն ց ի, Գրքույկ որ կոչի երգարան. Կ. Պոլիս, 177 էջ 125։*
5 *Նույն տեղում, էջ 29։*
6 *Պ. Դ պ ի ր, Տաղիկներ, էջ 132։*

Բանաստեղծը երազում է տեսնել մարդուն հոգեկան և մարմնական պահանջմունքների ներդաշնակության մեջ և այդ դիրքերից է քննադատում «լոկ բանիւ եղբարցս», «յանստոյգ ընկերացս» բարքերը.

Զի՞նչ է այլ մեծություն համեմատ սոսին,
Իբրու յն առ հոգի բաղդատի մարմին,
Մինչ գրտի եղկելիս գույսալիսույն լցմին,
Յայնժամ ասեմ՝ այժմիկ բարձրացավ անձն իմ7։

Հոգու և մարմնի ներդաշնակության պահանջը XVIII դարի հայ գրավոր քնարերգության առաջավոր մասի մեջ հանգում է մարդու բարոյական կերպարի կատարելության պահանջին։

Գրաբար գրավոր բանաստեղծությունը հակվելով դեպի իրական կյանքը՝ նկատում է նրա մեջ ծնվող նոր հակասություններ, հասարակական նոր հակամարտություններ։ Ծնվում են երգեր, որոնք զգացնել են տալիս գալիք առևտրա-բուրժուական հարաբերությունների շորշոփները, ոսկու և դրամի ուժը, մարդկանց միջև տնտեսական, նյութական հիմքի վրա աճող թշնամանքը.

Մնացիր անձն իմ խղճալի,
Ի բազմութեանց լեալ ի բաց,
Յուրմէ՞ յուսուս բզբարութիւն,
Բարիպաշտօն չըմընաց:

Իսպառ բարձեալ է իրաւունքս,
Ընդ նորին սուտ տարածեալ,
Առ մեծամեծս, առ ի ստրուկս՝
Ճշմարտութիւն չըմընաց:

Ամենայն ոք ջանաց պատրել,
Օձակուն բարս ունելով,
Վասն այն ի սիրտս, և ի լեզուս՝
Ստուգութիւն չըմընաց:

Համայն վաճառ կա խարդամածք,
Չափ մեծ և փոքր խաբարված,
Մինչ ի կրշոորդրս և ի կշիռս,
Արդարութիւն չըմընաց:

Վաճառականք են ծնոնաւորք,
Եւ դասելոյն դիտացեալ,
Որ ի վաճառս գինարանոց,
Անջուր գինի չըմնաց8:

Կյանքի բոլոր կողմերում աճող անարդարության փշերը խոցում են բանաստեղծի սիրտը այնպես, որ նրան թվում է թե ահա եկել է աշխարհի վերջը և տակնուվրա է լինելու ամեն ինչ.

Ո՞ւր իցես նեռ, ե՛կ, երևա՛ն,
Զի վախճանն է աշխարհի.
Թէ հարցանես զալստեան քո՝
Գուշակ, նըշմար չըմընաց9:

Ուստի՞ ծնար. ով բռնաւոր,
Որ քեզ նըման ոչ գոյ երկրի,
Որ թէ չըտաս դու ծեռն ումեք,
Ո՛չ զօրանա, և ոչ բերկրի...10:

Դրամը հզոր ուժ է, նա խորացնում է մարդկանց միջև եղած հակասությունները։ Դրամը աղքատացնում և հարստացնում է մարդկանց, դրամը չարիք և բարիք է ծնում, դրամը մեռցնում է մարդու հավատն ու խիղճը, դրամը «փափագելի բռնաւորն» է,— դժգոհում է Պ. Դպիրը։

* * *

Հասարակական, համընդհանուր նոր երևույթները գրավոր գրաբար բանաստեղծության նյութ դառնալով, նրան տալիս են բանականության և խոհականության շեշտ։ Դա XVIII դարի գրաբար բանաստեղծության երրորդ բնորոշ առանձնահատկությունն է:

Նախորդ դարերում հայ անհատական քնարական բանաստեղծության մեջ, ամբողջությամբ վերցրած, հայ ժողովրդի քաղաքական ազատասիրության հույզը որակական կշիռ չի ունեցել: XVIII դարը, որպես հայ ժողովրդի «թրի և դրչի» շարժումների նոր շրջան, ծնում է նաև ազա-

7 Նույն տեղում, էջ 131։

8 Մատենադարան, ձեռագիր № 9939, թերթ 2ա—3ա։

9 Մատենադարան, ձեռագիր № 9939, թերթ 4ա։ Այս բանաստեղծության վրա մեր ուշադրությունն է հրավիրել պրոֆ. Հ. Ս. Խաչիկյանը, որի համար խորապես շնորհակալ ենք։

10 Պ. Դպիր, Տաղիկներ, էջ 131։

տախոհ քնարական բանաստեղծության բազմաթիվ նմուշներ։ Այդ բնույթի երգերը նույն ժամանակներում ծնվող պատմա-կրոնական, պատմա-ավանդական արձակ և չափածո ողբերի հետ միասին ներկայանում են իբրև ժամանակի հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների պայքարի գրական արձագանքներ։ Այդպիսի արձագանքների մենք հանդիպում ենք XVIII դարի թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ մի շարք բանաստեղծների մոտ՝ Պաղտասար Դպիրի, Պետրոս Ղափանցու, Ղազար Ճահկեցու, Սիմեոն Երևանցու, Գրիգոր Օշականցու, Հովհաննես Կարնեցու, Հակոբ Շահամիրյանի, Հովհաննես Բերիացու, Թադեոս Ջուղայեցու, Հակոբ Վարդապետի («Նվիրակ հնդկաց»), Գևորգ Խուրովի, Սերովբե Պատկանյանի և այլոց երգերում։

Հարկավ, ժամանակի հայության կրոնա-քաղաքական կյանքը, ազատասիրական ձգտումները այդ բանաստեղծներից յուրաքանչյուրի մոտ դրսևորվում են տարբեր չափերով, գաղափարական տարբեր դիրքերից, տարբեր ակնկալությամբ, ինչպես նաև գեղարվեստական տարբեր եղանակների և ձևերի մեջ և տարբեր հաջողությամբ։

Այստեղ էլ նկատվում է նույն ուղղությունը. սկզբում ազատասիրությունը արտահայտվում է կրոնական երգերում՝ հոգու և մարմնի ընդդիմադիր պայքարի տեսքով, հավատացյալի մեղքի և զղջման տրտունջներով, անորոշ և անհաստատ ճանապարհներում դեգերող կրոնավորի ողբով ու լացով.

Արի՛ աստուած հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հաս օգնութիւն ծառայից քոց,
Անօգնական ազգիս հայոց[11]:

* * *

Ա՛րդ, առ քեզ գոչեմ, ո՛վ հայրդ գթած,
Հայցեա ի տեառնէ մեզ ողորմութիւն:
Նեղեալ, տառապեալ տոհմիս խաղաղութիւն,
Տալով գերելոցն գերադարձութիւն,
Ըստ աղերսանաց սուրբ մարգարէին,
Ի մեր հայրենիս անդրէն ժողովիլ[12]:

Ցավատանջ աղերսանքին հաջորդում են հավատացյալի ավելի քան վճռական պահանջն ու նույնիսկ բողոքը՝ դարձյալ առ աստված.

Զառ ի հիմանց քայքայեալս արժանացո նոր նորոգման.
Խորշակահար ծառաւելոյս առ խաղացո ջուր ոռոգման.
Ըզմեղացուցեալս անթիւ բասից մի՛ պատժեսցես ի յաւիտեան.
Զոր հաւանիմ և դաւանիմ՝ նոքօ՞ արա զիս տոհմական:
Ի գալըստեան բարեկամիս, եդից սեղան գործոց փոխան.
Այս խըրքանիկ ինձ զարթուցման և խոր քընոյ մրափեցման.
Առիթ լիցի յառաջացման առ զուր սիրոյզ վըստահացման.
Յաքսորութեանցըս փախուցման և հայրենւոյն յար տարփացման[13]:

XVIII դարում հնուց ի վեր երգվող «Կռունկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ» հայրենասիրական երգի ղողանջներին (այդ երգը առաջին անգամ տպագրում է Պ. Դպիրը) միահյուսվում են գրավոր գրաբար ազատախոհ նոր երգերի ղողանջներ («Ի նընջմանէդ արքայական», «Արի աստուած հարցըն մերոց», «Ի սուգ, ի լաց արդ մըտիս», «Աստուածեան քաղցըր և անոյշ հովերըն», «Փութա առ մեզ նաղշուն կաքաւ» և մի քանի տասնյակի հասնող հայրենասիրական այլ երգեր)։

Պ. Դպիրի «Ի նընջմանէդ» հանրահայտ բանաստեղծությունը, որ երգվում է այսօր էլ և որի եղանակով է երգվում նաև Սայաթ-Նովայի «Դուն էն գլխէն»-ը, արտահայտում է հայ ժողովրդի ազատասիրական զգացմունքները.

11 *Սիմեոն Երևանցի, Տաղարան փոքրիկ, էջ 46։*
12 *Պ. Դպիր, Տաղարան փոքրիկ, Պոլիս, 1768 թ., էջ 22։*
13 *Պ. Ղափանցի, Երգարան, էջ 156։*

Ի նրնժանէղ աւրհայական,
ՉԱՐԹԻ՛Ր, ՆԱԶԵԼԻԴ ԻՄ, ՉԱՐԹԻ՛Ր,
Ինձս նրւոյն աւեզական,
ՉԱՐԹԻ՛Ր, ՆԱԶԵԼԻԴ ԻՄ, ՉԱՐԹԻ՛Ր...։

ՏԱՊ ԵՎ ԽՈՐՇԱԿ ԺԱՄԱՆԵՑԻՆ,
Չրերրիկ դեղոյդ այրել կամին,
Քանզի Լանց գիշերն մրրին,
ՉԱՐԹԻ՛Ր, ՆԱԶԵԼԻԴ ԻՄ, ՉԱՐԹԻ՛Ր[14]։

Ողբ՝ հայկական դաշի, պետականության անհետացման համար, գովք և անձկայի կարոտ նազելի հայրենիքի. ոսկում՝ նրան սպառնացող վտանգի առաջ, քնքշագին թախանձանք՝ նրան տեական քնից, անշարժությունից սթափեցնելու համար։ Ահա թե ինչ զգացմունքներ է ներփակում Պ. Դպիրի այս բանաստեղծությունը։

ՏԱՊ ԵՎ ԽՈՐՇԱԿ ԵՂԵՆ ԱՐԴԵՆ ՄԱՀԱՄՈՏ,—

պատասխանում է Պ. Ղափանցին իր ավագ գրչակցին։ Ղափանցին իր ազատասիրական բանաստեղծություններում մտածված ձևով օգտագործում է Դպիրի վերոհիշյալ երգից առանձին տողեր ու մտքեր և կողմնորոշում ընթերցողին։ Իրոք, Պ. Դպիրի կրոնա-հայրենասիրական բանաստեղծությունների և Պ. Ղափանցու հայրենիքի և բնության համապատասխան երգերի ֆոնի վրա է լիապես հասկանալի դառնում «Ի նրնժանէղ» սքանչելի բանաստեղծության հայրենասիրական բովանդակությունը։

Ստ. Օրբելյանի «Ողբ ի դիմաց մայր կաթուղիկէի» պոեմի գաղափարները XVIII դարում և XIX-ի առաջին տասնամյակներում վերարծարծվում են նոր թափով։ Սկսած Պ. Դպիրից, Պ. Ղափանցուց, ներառյալ Խ. Աբովյանը, գրվում են բանաստեղծություններ, որոնցում էջմիածինը դըրվատվում է իբրև հայության ինքնուրույն պետականության խորհրդանիշ, իբրև հավատացյալ հայության համազգային կենտրոն։

Սույն XVIII դարում, հատկապես վերջին տասնամյակներում, երևան են գալիս նաև այնպիսի երգեր, որոնցում հայ ժողովրդի քաղաքական ազատասիրությունը որոշակիորեն ռուսական կողմնորոշում է ստանում։ Բանաստեղծության մեջ ներթափանցում են ժամանակի ավելի առաջադեմ քաղաքական հոսանքների գաղափարախոսության սերմերը (Հակոբ Շահամիրյան, Թադեոս Ջուղայեցի, Գևորգ Խուբով, Սերովբե Պատկանյան և այլք)։

Սակայն, XVIII դարի հայ կրոնա-քաղաքական, ազատասիրական-քնարական բանաստեղծությունը մի ամբողջական նկարագիր է ստանում Պ. Ղափանցու գրչի տակ։ Հիմնականում կրոնա-հայրենասիրական բանաստեղծությունների կողքին նա ստեղծում է նաև ազատագրական գաղափարախոսությամբ ներքնապես չեցուն, բարձր ու գեղեցիկ արվեստով քնարական բանաստեղծությունների մի ամբողջ շարք։

Անսած շրջանի հայ գրավոր քնարերգության մեջ չկա մի երգիչ, որ այնպես բարձր արվեստով ու խորը մարմնավորի հայրենիքի ազատության, կարոտի և սիրո զգացմունքները, ինչպես այդ անում է Պ. Ղափանցին իր հայրենիքի և բնության երգերում։ Սիրո և կարոտի միախառն զգացմունքները բանաստեղծը հաճախ արտահայտում է ողբով և լացով։ Ողբը հայկական քնարի գորեղ հնչյուններից է և ուղեկցել է նրան ի սկզբանե։ Հայ քնարերգության մեջ ողբով արտացոլվիցին հայության կրոնա-ծիսական, կրոնա-քաղաքական ու հասարակական կյանքի բազմազան կողմերը։ Պ. Ղափանցու Ծարեկացիական, խոհական ողբն իր մեջ ունի բանականության ու հույզի մի նոր շեշտ. բանաստեղծը քնարական ներքին շնչով է արտահայտում հայության ազատագրական իղձերը. «լալեաց ձայնիւ», «արտասուագետ, լացահեղեղ հառաչմամբ», «բարձրաձայն, մեծահեծեծ հառաչմամբ» նա հեծում է իր կուրծքը, այրվում ազատության ու հայրենիքի սիրուց ...Սա է XVIII դարի քնարական բանաստեղծության, ողբի նոր ձայնը։

«Ողբակենցաղ և լալակոծ» բանաստեղծի դեպի հայրենի երկիրն ունեցած սիրո և կարոտի զգացմունքները թրծվում են հույսի հնոցում։ Ողբ ու լաց, բայց ո՛չ նահանջ, ո՛չ մահ, ո՛չ զիջում... այլ՝ ձգտումներ, սպասումներ, մաքառում, երազանք, հավատ, լավատեսություն։ Հայրենիքը բերկրություն պիտի բերի երգչին՝

Ե՛կ, բերկրեցո, զայս Ըն զերիս ցաւալի[15]։

Նա պիտի ապաքինի բանաստեղծի հոգու բոլոր վերքերը՝

Ապաքինիչ եւզւոյս վերացն ամենայն[16],

14 *Պ. Դ պ ի ր, Տաղարան..., էջ 98։*
15 *Պ. Ղ ա փ ա ն ց ի, Երգարան, էջ 49։*
16 *Նույն տեղում, էջ 51։*

Նա պիտի փարատի երգչի սրտի ցավերը՝

Մէկիկ-մէկիկ սրտիս զաւերն փարատեա[17].

Նա պիտի մահից կյանքի կոչի երգչին, դուրս բերի նրան հնության խավարից, լուսավորի գերի բանաստեղծի սիրտը՝

Լուսաւորեա զայս իմ սրտիկս մթացեալ[18].

Պ. Ղափանցու այդ երգերը հայ և հույն ժողովուրդների XVIII դարում մղած ազատագրական պայքարի քնարական առաջին արձագանքներն են (նաև իրենց մեղեդիներով)։

Պ. Ղափանցու քնարի խրախույսը հավատքի և հայրենիքի համատեղ սերն է, «իր սիրելի ազգի», ժողովրդի ազատությունը. նա երկրպագում է «ազգն իւր սիրելի», «ազգն իւր պատուելի», նա հավերժացնում է իր հայրենիքը, նա տենչում է նրան. խոնարհվում է նրա առաջ, տառապում է նրա ցավերով. նա ատում է նրա թշնամիներին։ Թշնամին բանաստեղծի այդ երգերում կերպարանավորվում է իբրև «տապ և խորշակ», իբրև «որդք և ուտիճք»՝ «փոքունք, մանրուք և մեծամեծ աւազակք», իբրև «բանտ և վիշապ», իբրև «ագռաւ», «վայրագ հողմք», իբրև «փշոտ անտառք»։

XVIII դարի կրոնա-հայրենասիրական, ազատասիրական բանաստեղծությունը ներծծված է խոհական սիրո և ատելության հակադիր զգացմունքներով։

Զարթի՛ր, նազելիդ իմ, զարթի՛ր,

թախանձում է Պ. Դպիրը իր հայրենիքին՝ այնպիսի քնքշագին սիրով, ինչպես Սայաթ-Նովան իր գյոզալին։ «Զարթիր, փութով»— թախանձում է Պ. Ղափանցին իր ժողովրդին նույնքան քնքշագին սիրով, որքան Սայաթ-Նովան իր յարին.

Հոգւոյ իմոյ զանձ անսպառ և բիւր բարի,
Զարթի՛ր փութով, անկըն մատո, ի լուր արի,
Տես, թէ զիա՞րդ, ցուրտն եղեռազդ ի բաց վարի,
Պէդ ւռննարի, միշտ չարչարի ի դար-դարի[19].

Ազատասիրությունն ու հայրենասիրությունը և ատելությունը թշնամիների նկատմամբ դարի գրավոր գրաբար բանաստեղծության չորրորդ առանձնահատկությունն է։

Պ. Դպիրը, Պ. Ղափանցին, Ս. Երևանցին, Գր. Օշականցին, Հովհ. Կարնեցին, Հովհ. Բերիացին, Գ. Խուրովը, Հ. Շահամիրյանը, Թ. Ջուղայեցին, Ս. Պատկանյանը և ուրիշներ իրենց կրոնաքաղաքական և հայրենասիրական, ազատախոհ երգերով ստեղծում են XIX դարի հայ քաղաքական քնարերգության նախապատմությունը, սկզբնավորում են անցման շրջանի ազգային-ազատասիրական բանաստեղծության ուղին։

Այդ ուղիով առաջ են ընթանում XIX դարի առաջին տասնամյակների նշանավոր բանաստեղծները՝ Հովհ. Վանանդեցին, Արսեն Բագրատունին և այնուհետև Հ. Ալամդարյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը և ուրիշները։

XVIII դարի գրաբարագիր բանաստեղծության մեջ կրոնա-հայրենասիրական, ազատասիրական, հասարակական և սոցիալական, բարոյա-կրթական և այլ բնույթի երգերի հետ միասին առանձին որակ են կազմում նաև սիրո երգերը։

Պ. Դպիրի և նրան հետևողների (Հովհ. Կարնեցի, Գր. Օշականցի, Գ. Խուրով և այլք) սիրո երգերը ընդհանուր տրամադրությամբ տարբերվում են և՛ նախորդ դարերի երգիչների սիրո երգերից, և՛ աշուղական սիրային բանաստեղծություններից։ Պ. Դպիրի սերը Հ. Թլկուրանցու և Գր. Աղթամարցու սերը չէ, որը ջերմ է ու կենսալից, սակայն սոսկ նկարագրական է, արտաքին, քաղցրության և ջերմության մեջ միակողմանի...։ Պ. Դպիրի սերը ո՛չ էլ Նաղաշ Հովնաթանի սերն է, որից հորդում են կիրքն ու վայելքը։ Նրա սերը զուսպ է, չափավոր, ավելի վշտաթաթախ, ավելի խոհական, իմացական, ավելի անբավական ու ավելի դժվարահաս։ Պ. Դպիրի սիրո երգերի հեբոսը այն անհատն է, որի սիրող սիրտը խոցված է ո՛չ միայն անպատասխան մնացած կամ չը-

17 Նույն տեղում, էջ 52։
18 Նույն տեղում, էջ 50։
19 Նույն տեղում, էջ 88։

գտած սիրուց. հասարակական վիշտն ու դժգոհությունն է ներծծված նրա սիրո մեջ, ինչպես է հանճարեղ Սայաթ-Նովայի մոտ...:

Այս բոցոյս թէ ծովեր կասյեն, չըգիտէ իսկի մարիլ,
Այլ ճանապազ նոր ի նորոյ ըսկըսանի ի վառիլ,
Զի ինքն այլ տեղ, հոգին այլ տեղ. ո՞վ կարէ կալ դադարիլ...»20:

Քիչ է բերկրանքը, շատ են տառապանքները, շատ են սպասումներն ու մաքառումները: Այստեղ առկա է բանական, խոհական մարդու հուզաշխարհի ընդվզում, փոթորիկ՝ նվիրական սիրո համար: Դա XVIII դարի գրավոր գրաբարալեզու բանաստեղծության հինգերորդ բնորոշ առանձնահատկությունն է: Այդ առանձնահատկությամբ Պ. Դպիրի սիրո երգերը կամուրջ են ստեղծում դեպի Սայաթ-Նովայի անզուգական քնարը.

Հերիք ողբաս, գոչես, լաս և հառաչես.
Ու բզզալըս սրտի իմոյ նորոգես,
Գիտեմ, զի ինձ նըման կարօտով լի ես.
Լռեա՛, երգնակ, լռեա, սիրտն իմ խոցեալ է,
Մի՛ լար, անբախտ, մի՛ լար, աչքն իմ լցեալ է21:

Ուստի՞, կու գաս, ղարիբ բլբուլ.
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու,
Դու վարդ պըտռե, յիս գոզալին—
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու22:

Սայաթ-Նովայի քնարը ընդդիմադիր չէ XVIII դարի գրաբար գրավոր բանաստեղծությանը: Սայաթ-Նովան համեմատելի է XVIII դարի գրավոր գրաբար բանաստեղծությանը՝ դեպի կյանքն ունեցած անհուն սիրով և դեպի նույն կյանքն ունեցած անհուն դժգոհությամբ, ինչպես նաև քնարական արվեստի մի շարք հատկանիշներով (տաղաչափություն, հանգավորում և այլն):

Խոհական, իմացական, դուսպ, նվիրական ու թախծոտ սիրո երգը XVIII դարի գրաբար բանաստեղծության հինգերորդ առանձնահատկությունն է:

Ի տարբերություն աշուղական, ժողովրդական «խառնալեզու» բանաստեղծության, նրա թեթևվաշունչ ոճի, անպաճույճ, կենսալից, հաճախ պարզունակ պատկերների, այդ դարի գրավոր առաջավոր բանաստեղծությունը ավելի վերամբարձ է, հռետորական, հանդիսավոր, գեղեցիկ, զարդարուն.

Օր աճեղ, օր աճեղ, օր աճեղ,
Յորում արեգակն և լուսինըն խաւարեցին.
Եւ զօրութիւնք երկնից համայն շարժեցին23:

Ձա՛յն մի յերկնից, ձա՛յն մի յերկրէ ի պարտիզաց,
Ձա՛յն ի լերանց, ձա՛յն ի յայգեաց և ի դաշտաց,
Համախառնեալ գոչեն թռչունք բիւր հազարաց.
Արի՛ք եղբարք, ելցուք ի դաշտ բզբօսանաց24:

Խոհական, զգացմունքային և վսեմ ու գեղեցիկ, զարդարուն, հռետորական ոճը XVIII դարի գրավոր գրաբար բանաստեղծության վեցերորդ առանձնահատկությունն է:

Սակայն, ինչպես նկատեցինք արդեն, XVIII դարի գրաբար գրավոր բանաստեղծության զարգացման ուղին ընդդիմադիր չէ ժողովրդական և աշուղական բանաստեղծության զարգացման ուղուն: Եվ այդ հասկանալի է: Գրաբար գրավոր բանաստեղծության ներկայացուցիչները չէին կարող խուսափել իրենց ժամանակի աշուղական և ժողովրդական առաջավոր բանաստեղծության ազդեցությունից, ուստի նրանք առատորեն օգտվում էին այդ արվեստի ակունքներից: Գրավոր

20 Պ. Դպիր, Տաղիկներ, էջ 65:
21 Նույն տեղում, էջ 119:
22 Սայաթ-Նովա, Երևան, 1963, էջ 19:
23 Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 95:
24 Պ. Ղափանցի, Երգարան, էջ 59:

գրաբար առաջավոր բանաստեղծությունը XVIII դարում կրում է իր վրա և՛ հայ հին գրավոր բանաստեղծության, և՛ հայ ժողովրդական ու աշուղական բանաստեղծության կնիքը: Գրավոր և ժողովրդական, աշուղական բանաստեղծության արվեստի առանձին հատկանիշների միասնական արտահայտությունը XVIII դարի գրաբար բանաստեղծության յոթերորդ առանձնահատկությունն է:

Սակայն կա մի նրբություն։ Հայ գրաբար բանաստեղծությունը ամբողջությամբ ավելի համեմատելի է հունա-հռոմեական, արևմտաեվրոպական բանաստեղծությանը, իսկ հայ աշուղական բանաստեղծությունը ավելի համեմատելի է արևելքի՝ արաբական և պարսկական-թուրքական բանաստեղծությանը։

Բրյուսովը խորաթափանցորեն նկատում է միջնադարյան հայ երգի արևելյան և արևմտյան հատկությունները, նրա «արևելյան երփներանգ դույներին» և «արևմուտքի կուռ ու զուսպ հատկության» միասնական արտահայտությունը։ «Հայ բանաստեղծությունը,— գրում է նա,— արևելյան ձևով գունագեղ, արևմտյան ձևով իմաստուն. ճանաչում է կսկիծ առանց հուսահատության, կիրք՝ առանց մոլագարության, հիացմունք՝ զերծ անզսպությունից»[25].

Բրյուսովի նշած առանձնահատկությունը ընդհանուր է հայ բանաստեղծության համար։ Սակայն երբ ի նկատի ենք ունենում հատկապես XIII դարից առաջ՝ V—XII դարերի և XVII դարից հետո՝ XVIII—XIX դարերի հայ գրավոր բանաստեղծությունը, տեսնում ենք, որ դրանք իրենց բնույթով ավելի համեմատելի են արևմտյան բանաստեղծության հետ։ Իսկ XVI—XVII դարերի ժողովրդական, ապա և աշուղական բանաստեղծությունը ավելի համեմատելի է արևելքի բանաստեղծության հետ։ Նման հարաբերություններ Բրյուսովը վերագրում է մերթ ողջ հայ քնարերգությանը, մերթ էլ ժողովրդական երգին միայն։ Սակայն հատկապես նոր ժամանակներում՝ XVII—XVIII դարերում և այնուհետև, երբ բուն հայրենիքում ու գաղութներում (Եվրոպայում և Ռուսաստանում) ծայր էին առնում լուսավորական նոր շարժումներ ու քաղաքական, աղատագրական պայքար՝ եվրոպական գաղափարների՝ գիտության, գրականության և արվեստի ազդեցությունը հայ առաջադեմ մտավորական շերտերի վրա անհամեմատ ուժեղանում է: Այդպիսի ոչ ուղղակի, հեռավոր ազդեցության արդյունք են XVIII դարի գրաբար բանաստեղծության վերոհիշյալ առանձնահատկությունները. այդպիսի ո՛չ հեռավոր, այլ անմիջական ազդեցության մի պերճախոս ապացույց է XVIII դարի հայ գրավոր բանաստեղծության տեսությունը։ Խաչատուր Էրզրումեցին 1711 թ. Վենետիկում հրատարակում է «Յաղագս արուեստի», «Յաղագս բանաստեղծութեան», «Յաղագս ենթակայի բանաստեղծութեան», «Յաղագս սահմանի բանաստեղծութեան» գրականագիտական հոդվածները։ Դրանցում կերպարանք են ստանում հայ գրավոր գրաբար բանաստեղծության տեսական սկզբունքները։

---

[25] В. Брюсов, Поэзия Армении, М., 1916, էջ 38։